

ՆՈՒՅԵՐԷՆ ՅԵՏՈՅ ՎԱՆՔԵՐԸ

Երուսաղեմի Անապասին մեջ Դ. դարուն խցային կեանքը զարգացում մը ունեցաւ. Եգիպտական անապասներուն մեջ, *մենակեացութիւնը* այլ եւս ապարդիւն դարձած էր, տարիներով առանձնական կեանք վարողները անտարակոյս մտածեցին թէ նոյն կեանքը իր մասնաւոր քաղցրութիւններէն զատ, ոչ մի կերպով հաւաքական օգտակարութիւն չի կրնար բնծայել, քիչ լիտոյ յսկանաւորական գաղափար դարձաւ հետեւեալ բաժնուումը, «պէտ է միացնել հոգիները ազատելու համար», խցային կեանքը պէտ էր ամբողջով զարգացման համապարհը եւ յառաջ բերել միաբանակցի կեանքը. վասն զի այս կեանքը աւելի կատարեալ է քան անապասականիւնը՝ գորութեամբն այն առաքիճութեանց՝ որոնց գործարութիւնը կը պահանջէ համարիւն եղբարց բնկերութիւնը: Եգիպտական Անապասին մեջ փորձառութեամբ կը տեսնէին անապասական կեանքի անպատեհութիւնները: Այլ եւս գաղափարները փոխուած էին, մենակեացներուն յարաբերութիւնները մտնուցան: Անապասականները հետզհետէ խտացուցին իրենց շարքերը ու եկան հաստատուելու ձերուսի մենակեացներու մօտ. հասունացած էր միաբանակցութեան գաղափարը: Անապասական Պախոմեոս հասկցած էր այս պարսպան եւ գործի ձեռնարկեց. ան բնդարձակեց իր բնակարանը եւ պատրաստուեցաւ բնդունիլ այն եղբայրները՝ որ պիտի գային իր շուրջը հաւաքուելու: Նեղ կու գար իր շէնքը. հետզհետէ բարձրացան վանքերը Նեղոսի երկու կողմերը եւ անոնք օժտուեցան նաեւ եկեղեցիներով: Պախոմեոս ոգին էր նոյն վանքերուն, որոնց տուաւ նաեւ կանոնագրութիւն մը՝ որուն համար, աւանդութիւնը կ'ըսէ թէ՛ հրեշտակներէն ստացաւ զայն: Եգիպտոսի վանքերուն պատմութիւնը կը վկայէ թէ այս նոր հաստատութիւնները ո՛րպիսի զարգացում ունեցան եւ ո՛րպիսի արդիւնքներ բնծայեցին քրիստոնէական կեանքի համար:

Այս բացատրութիւնները տալէ վերջ պէտ է դիտենք թէ Երուսաղեմի Անապասի խցային կեանքը Դ. դարէն վերջ տակաւին շատ ժամանակներ տեւական մնաց: Նոյն դարէն սկսեալ թէեւ մեծամեծ